

մնայ մեծ զանգուած մը խնդրական ընթերցմանց, միթիւն տեղերու եւն:

Բնագրին այս վիճակն եւ այն պարագան որ մեր մատենադարանը չունինք օրինակ մը խիկարոյ՝ ստիպեց զմեզ ետ կենալու մեր դիտաւորութեանն, զոր տնէինք հրատարակել հայ բնագիրն՝ համեմատութեամբ միւս բնագիրներուն. վասն զի ստիպուած էինք՝ բնագիրը ծայրէ ծայր սրբագրել, որ քիչ շատ միշտ կամայական կը մնայ, քանի որ վստահելի աղբիւր մը կը պահի: Եւ այսպէս կը սպասենք ընտրելագոյն օրինակի մը:

Հ. Յ. Տ.



Հ Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Հ Ա Յ Բ Ժ Թ Կ Ե Կ Ը Ն Չ Ե Ռ Ը Գ Ի Բ Բ

“Օգոստ Բժշկութեան, Ամիրտովլաթայ

Օգոստ Բժշկութեան երրորդ օրինակն է այս, զոր կը ծանօթացնենք աստ. երկար պիտի չխօսիմ ասոր մասին, այլ տեղեկութիւն մը միայն պիտի տամ, եւ այսու աւելի պիտի հաստատուի, յուսամ, թէ՛ Պունիաթ Սեբաստացի բժիշկն եղած է իրաւ, որ Ամիրտովլաթայ գործը խաւարէն հանած է, շարագրած է եւ ծանօթացուցած է իւր ազգին, ինչպէս կը յայտնէր Պալաթի Չեռագիրը¹:

Ներկայ ձեռագիրս սեպհականութիւն է Պալաթիոյ Աղգ. Կեդրոնական Մատենադարանին: Կաշէկազմ, լաւ հանգամանքներու մէջ պահուած մեծկակ հատոր մըն է. երկայնութիւնն է՝ 32,5 հարիւրորդամէտր, լայնութիւնը՝ 22,9 հարիւրորդամէտր, իսկ թանձրութիւնը՝ 3,9 հարիւրորդամէտր: Ամբողջ հատորը կը բաղկանայ 189 թերթ բամբակեայ հաստ թղթէ, որոնցմէ առաջին 4 հատը պարապ են, 199 հատը շարունակաբար գրուած, իսկ մնացեալ 26 հատն ալ դարձեալ պարապ թողուած են:

Գիրը նոսր է գեղեցիկ եւ ընթեռնելի, եւ երկսիւն առանց զարդագրերու: Առաջին էջին վրայ կը տեսնուի մարդկային մարմնոյ մերկ պատկեր մը, շուրջանակի ունենալով 12 համաստեղութեանց նշանները, որուն ստորտը կը կարգացուին հետեւեալ տողերը.

Ի եւ քաղաք յիս պանծալի պարագրական,
Յոր աշդարակք՝ կենդանակերպք երկոտասան.
Որք են եօթնից մոլորակացըն կայարան
Ի մըտանէն՝ ազգեն կանուխ ըզվազորդեայն:

¹ Հանդէս Ա՛-օրէայ թիւ Ապրիլի 1899. էջ 108

Այս պատկերէն անմիջապէս ետքը կը սկսի Օգոստ Բժշկութեան Յառաջարանն իւր երկու Յիշատակարաններով, յար եւ նման Պալաթի ձեռագրին¹:

Առաջին Յիշատակարանն է՝

“Այսպէս գիրքմն շինեցի ես անպիտան, եւ անարժան նուաստ ծառայն աստուծոյ ամիր տօլէթ բժիշկն ամասիացին ի մայրաքաղաքն ի Փիլիպայ ի թուականս հայոց . 986. ամին եւ ամսոյն ի դեկտեմբերի . 16. ին օրն. Ե. շաբաթի, եւ ծնունդ էր, Բ. փրկչին այլազգեաց:” եւն:

Երկրորդ Յիշատակարանն է՝

“Թարբմանեցաւ պատուական բժշկարանս ի թուականիս հայոց . 986. ամին դեկտեմբերի, 16. որ ծնունդ էր փրկչին այլազգեաց, հաշուովն ի կաթողիկոսութեան տէր ըստագիսին. եւ եպիսկոպոսութեան տէր յովակիմին:” եւն:

Այս Յիշատակարաններով անգամ մ՛եւս կը հաստատուի թէ, Ամիրտովլաթ իւր Օգոստ Բժշկութեանը սկսած է 915 + 551 = 1466 դեկտեմբեր 25ին, եւ աւարտած, 918 + 551 = 1469 դեկտեմբեր 26ին, ինչպէս կը յայտնէր զայն նաեւ Պալաթի օրինակը²:

Երկրորդ Յիշատակարանին անմիջապէս կը յաջորդէ ձեռագրին ընդօրինակիչն ու ընդօրինակութեան ժամանակն յայտնող ուրիշ Յիշատակագրութիւն մի, որ է՝

“Վերստին նորոգեալ եղև ի թուականի հայոց ՌճՂԲ. Օգոստոսի . ԺԸ. ի հայրապետութեան ամենայն հայոց Տեառն Ղազար Կաթողիկոսի: Եւ սուրբ երուսաղեմայ վերադիտողն Տեառն Գրիգորի երկրորդաբար լուսաւորչի, եւ կոստանդնուպօլսոյ Պատրիարգ, Տեառն Յակոբ Արքեպիսկոպոսի: Չեռամբ մեղապարտ, տէր կիւրեղ գրչիս սեբաստեան գրեցի զայս վասն իմ բազմացաւութեանս մարմնոյ զի օգտիցիմ ի սմանէ սակաւուկ ինչ: Այլ եւ աստուածն համայնից տացէ սկզբան թարգմանողի սրա Ամիրտովլէթին եւ նախնեաց իմաստասիրացն արքայութիւն: Եւ յետոյ օրինակողաց եւ ընթերցողաց հոգեւոր եւ մարմնաւոր առողջութիւն ի տէր ինդալ, Ամէն:”

Պալաթիոյ ձեռագիրս ընդօրինակուած է ուրեմն Կ.Պոլսոյ մէջ, Նախնեաց Յակոբ Արքեպիսկոպոսին առաջին Պատրիարքութեան ժամանակ, 1743 թուին օգոստոսի 18ին, 29 տարի յառաջ ինձ սեպհական Օգոստ Բժշկութեան

¹ Հանդէս Ա՛-օրէայ թիւ Ապրիլի 1899.

² Անդ: